«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

IJEVAN BRANCH OF
"YEREVAN STATE UNIVERSITY"
FOUNDATION

STUDENT SCIENTIFIC
SOCIETY

ՀՀ, Իջևան, 4001, Ուսանողական 1,
sssysuib@gmail.com, ijevan.ysu.am

1 Usanoghakan, 4001, Ijevan, RA
Tel: (+374) 94-16-13-93

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

(2018-2019 թթ. ուստարվա 2-րդ կիսամյակ)

ք. Իջևան «21» մայիսի 2019թ.

Հ/Հ	Միջոցառման բնույթը	Խորագիրը/ Թեման	Անցկացման օրը	Համառոտ նկարագրությունը
1.	Համաժողով	«Բարբառագիտական ընթերցումներ»	Մարտի 2	Կազմակերպվել էր ԵՊՀ Հայ բանասիրության ֆակուլտետի ՈՒԳԸ-ի և ԵՊՀ ԻՄ Հայոց լեզվի և գրականության ամբիոնի նախաձեռնությամբ և ջանքերով: ԵՊՀ ուսանողներին պատշաճ ընդունելության, համաժողովի ընթացքում ծագած ընթացիկ հարցերի կարգավորման գործում էր ներգրավված նաև մասնաճյուղի ՈՒԳԸ-ն: Բարբառագիտական ընթերցումներով հանդես եկան ՈՒԳԸ 3 անդամներ՝ Արմիդա Բաղիյանը, Աստղիկ Ղազարյանը, Ռոզա Մելքումյանը:
2.	Դաս-քննարկում	«Տավուշի մարզի պատմաճարտարա-պետական հուշարձանները և դրանց տեղադրությունը»	Մարտի 7	Տեղի ունեցավ հանդիպում վաստակաշատ լրագրող, գրող, հրապարակախոս, բանահավաք և հետազոտող Ռուբեն Սիմոնյանի հետ, ով իր գիտական գործունեության ընթացքում հասցրել է ուսումնասիրել Տավուշի մարզի բնակավայրերի պատմությունը, առանձին գրքեր է հրատարակել տարբեր համայքների մասին, ինչպես նաև զբաղվում է տոհմագրությամբ: Հանդիպման նպատակն էր «Պատմություն» մասնագիտության ուսանողների հետ անցկացնել «Տավուշի մարզի պատմաճարտարապետական հուշար-ձանները և դրանց տեղադրությունը» թեմայով դաս-քննարկում, որին մասնակցում էր նաև ԵՊՀ ԻՄ-ի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դասախոս, գրադարանի վարիչ Վլադիմիր Պողոսյանը: **Համագործակցություն՝ ԵՊՀ ԻՄ գրադարան**

3.	Կինոդիտում	"Social Network"	Մարտի 12	Ուսանողները ծանոթացան Մարկ Ցուկերբերգի ուսանողական տարիներին, թե ինչպես և ինչու 2004 թվականին, երբ նա դեռ սովորում էր 2-րդ կուրսում, ստեղծեց Ֆեյսբուք սոցիալական ցանցը, և թե ինչպես մի քանի տարվա ընթացքում Մարկը դարձավ աշխարհի ամենաերիտասարդ միլիարդատերը:
4.	Հանրամատ-չելի զեկուցում	«Ֆաբերժեի ձվեր»	մարտի 21	«Ֆաբերժեի ձվեր» արտահայտությունն այսօր ընկալվում է որպես մինչհեղափոխական Ռուսաստանի և Ռոմանովյան դինաստիայի շքեղության և հարստության խորհրդանիշ: Զեկուցման նպատակն էր մեկ ակնարկի միջոցով ուսանողությանը ներկայացնել ռուսական մշակույթի գլուխգործոցների՝ «Ֆաբերժեի ձվերի» պատմությունը:
5.	Կինոդիտում	"Большой скачок. Старая и новая картография"	Մարտի 26	Ֆիլմի շնորհիվ ուսանողները ծանոթացան ժամանակակից քարտեզագրության տված առավելություններին, իմացան, թե ինչպիսի ստուգումների միջով են անցնում նավերը, և թե ինչպես են ժամանակակից էլեկտրոնային քարտեզների, մասնավորապես՝ MSKC ծրագրի միջոցով հետևում ու վերահսկում նավերի ճանապարհը՝ կանխելով գրեթե բոլոր աղետները:
6.	Հուշ-ցերեկույթ	«Նրանք ապրում են»	Ապրիլի 3	Ներկա էին ԵՊՀ ԻՄ-ի վարչական և պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամներ, Իջևանի զորամասի ներկայացուցիչներ՝ հրամանատարի տեղակալ Նվեր Մանգասարյանը, զորամասի գնդերեց Ռուբեն սարկավագ Արզումանյանը, մի շարք սպաներ, զինվորներ, մարզի հերոս, Ապրիլյան պատերազմում զոհված Վլադիմիր Ալիխանյանի ընտանիքի անդամները, Մակարավանքի հոգևոր հովիվ Արշավիր քահանա Ասատրյանը, ուսանողներ, հյուրեր, քաղաքացիներ: Ցերեկույթի ընթացքում սրտառուչ ելույթ ունեցան 2016թ. Ապրիլյան պատերազմին մասնակցած, այժմ ԵՊՀ ԻՄ-ի աշխատակիցներ, գրադարանի վարիչ, Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դասախոս Վլադիմիր Պողոսյանը, Մասնագիտական կողմնորոշման և պրակտիկայի կազմակերպման բաժնի տեսուչ, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դասախոս Սլավիկ Ալավերդյանը: Միջոցառումը եզրափակվեց Մակարավանքի հոգևոր հովիվ Արշավիր քահանա Ասատրյանի օրհնության խոսքով ու աղոթքով: **Համագործակցություն՝ ԵՊՀ ԻՄ ՈՒԽ, ԵՊՀ Վարդանանք ակումբի Իջևանի մասնաճյուղ,**

				ԵՊՀ ԻՄ Հայոց լեզվի և գրականության ամբիոն:
7.	Առցանց հարցում	ԵՊՀ ԻՄ-ի ուսանողների՝ գիտաժողովներին մասնակցելու մոտիվացիայի վերաբերյալ	Ապրիլի 1 – ապրիլի 10	Հարցմանը մասնակցել են 39 հիմնականում 2-րդ և 3-րդ կուրսի ուսանողներ՝ մասնաճյուղի բոլոր ֆակուլտետներից: Հարցման արդյունքում վեր հանվեցին այն պատճառները, թե ինչու ուսանողը չի մասնակցում գիտաժողովների, մասնակցության պարագայում ինչ խնդիրների է բախվում, որն է մասնակցության պատճառը և այլ: Ամփոփ արդյունքները հրապարակվել են ԵՊՀ ԻՄ-ի կայքէջում: **Համագործակցություն՝ ԵՊՀ ԻՄ Կրթության որակի ապահովման բաժին**
8.	Մասնակցություն	Համաբուհական ուսանողական բանավեճին	մարտ-մայիս	2019թ. մարտից մեկնարկել է ՀՀ բոլոր բարձրագույն և միջին մասնագիտական կրթական հաստատությունների ուսանողների համար նախատեսված Համաբուհական ուսանողական բանավեճի առաջնությունը: Առաջնությանը մասնակցում է նաև ԵՊՀ ԻՄ-ի թիմը, որի անդամներից 3-ը ՈՒԳԸ անդամներ են:
9.	Ֆեյսբուքյան էջի ակտիվություն	Հրապարակումներ տարբեր թեմաների, փաստերի մասին	Կիսամյակի ընթացքում	ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ գիտական խորհրդի որոշման համաձայն՝ այսուհետ ֆեյսբուքյան էջում տեղադրվելու են ոչ միայն ՈՒԳԸ-ի գործունեության կամ բուհում անցկացվող տարբեր միջոցառումների մասին ինֆորմացիա, այլ նաև նյութեր տարաբնույթ թեմաներից: Արդեն իսկ հրապարակվել են նյութեր՝ հիշողության 6 մնեմոտեխնիկաների, նախաքննական և քննական սթրեսի հաղթահարման, սովորելու մոդելների և այլ թեմաների մասին:
10.	Դասախոսություններ	Հայաստանյան բիզնեսի հաջողությունները	Մարտի 30, մայիսի 3	Երկու օրերի ընթացքում ներկայացվեց, թե տնտեսական գործունեություն վարող անձինք և կազմակերպությունները ինչպես են կազմավորվում և ինչ նպատակներ են հետապնդում: Թվարկվեցին դրանց առանձին տեսակները: Ներկայացվեցին նաև հայկական մի քանի հաջողակ ֆիրմաների զարգացման նախադրյալները, անցած ուղին: Բացատրվեցին հարկատեսակների առանձնահատկությունները, տարբերությունները, հաշվարկման ձևերը:
11.	Սեմինար	«Թյուրինգի մեքենայի մոդել»	Մայիսի 3	Սեմինարը վարեց «ԻԿՄ» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող Արայիկ Շահնազարյանը: Սեմինարի ընթացքում ցուցադրվեց Թյուրինգի մեքենայի մոդելի C++-յան մոդելը՝ իր պատկերացումներով, ներկայացվեց աշխատանքի ընթացքը, հիմնական փոփոխականները, ֆունկցիաները և մոդելում գործող երկու հիմնական ալգորիթմները. նախ, թե ինչպես է Թյուրինգի

				մեքենայի կոդը ձևափոխվում ու վերածվում տվյալների՝ տեղավորվելով համապատասխան մատրիցներում, ապա թե ինչ ալգորիթմով է համապատասխան մատրիցից հերթական ճիշտ ընտրությունը կատարվում, և թե ինչպես է ժապավենի վրա հայտնվում ճիշտ արդյունքը:
12.	Առաջնութ-յուն	Ինտելեկտուալ խաղի մասնաճյուղային առաջնություն	Մայիսի 10	Մասնակեցին 8 թիմեր, ներառյալ՝ ՈԻԳԸ 1 և ՈԻԽ 2 թիմերը: Ուսանողներին հնարավորություն էր տրված թիմում ներառել ոչ միայն նույն կուրսի ուսանողներին, այլև տարբեր կուրսերի, մասնագիտությունների և ֆակուլտետների ուսանողների: Այս ձևաչափի նպատակը թիմերի արդյունավետության բարձրացումն է: Առաջնությունն անցկացվեց 1 փուլով, որի ընթացքում տրվեց տրամաբանական և ընդհանուր զարգացվածության բնույթի 20 հարց:
13.	Ինտելեկտուալ խաղ	Ամենախելացին	Մայիսի 14	Խաղին մասնակցում էին 10 ուսանող՝ մասնաճյուղի բոլոր ֆակուլտետներից: Խաղի համար հարցեր կազմելուն մասնակցել են նաև մի շարք ամբիոններ: Խաղի առաջին փուլն անցկացվեց բջջային հատուկ հավելվածի՝ Quizizz-ի օգնությամբ, տրվեց ընդհանուր զարգացվածությունն ստուգող 10 հարց, ընդ որում՝ մասնակիցները լրացուցիչ միավորներ էին վաստակում նաև հարցերին արագ պասասխանելու համար: Առավելագույն միավոր հավաքած 5 ուսանողները հնարավորություն ստացան խաղը շարունակել երկրորդ փուլում: Երկրորդ և երրորդ փուլերի համար «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող Արայիկ Շահնազարյանը HTML, CSS և JavaScript լեզուների միջոցով ստեղծել էր համակարգչային հատուկ ծրագիր, որն էլ խաղի 2-րդ և 3-րդ փուլերը հնարավորինս մոտեցնում էր հեռուստախաղի ձևաչափին: Խաղի հաղթող Տիգրան Ղուշչյանը պարգևատրվեց մեդալով, պատվոգրով և հուշանվերով: **Համագործակցություն՝ ՈԻԽ, Հայոց լեզվի և գրականության, Հայոց պատմության և հասարակագիտության, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոն**
14.	Մասնագի-տական բառախաղ	Տնտեսագիտական տերմիններով «Այլկերպ»	Մայիսի 15	Խաղին մասնակցում էին Տնտեսագիտության ֆակուլտետի «Ֆինանսներ» մասնագիտության 1-ին և «Տնտեսագիտություն» մասնագիտության 3-րդ կուրսի շուրջ 10 ուսանողներ:
15.	Դաս-քննարկում	ԵՊՀ 100-ամյակին նվիրված	Մայիսի 16	Դաս-քննարկմանը ներկա էին Հումանիտար գիտությունների

				ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար բ.գ.թ., դոցենտ Կ.Պողոսյանը, փոխդեկան բ.գ.թ., դոցենտ Վ.Աղաբաբյանը, ամբիոնի դասախոսներ Ա.Մատինյանը, Ա.Մկրտումյանը, ուսանողներ, հյուրեր: Դաս-քննարկման ընթացքում ընդհանուր գծերով ներկայացվեցին ԵՊՀ հիմնադրման պատմությունը, ԵՊՀ պատմաբան ռեկտորների (մասնավորապես՝ Հակոբ Մանանդյանի, Մկրտիչ Ներսիսյանի, Արամ Սիմոնյանի) ծավալած գործունեությունը, Պատմության ֆակուլտետի ունեցած տեղն ու դերը համալսարանի կյանքում, ԵՊՀ թանգարանի դերը, Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի հիմնումը և ծավալած գիտական գործունեությունը: Այս թեմաների շուրջ զեկուցումներ ներկայացրին «Պատմություն» մասնագիտության երրորդ կուրսի ուսանողներ Միեր Ղալումյանը, Լարիդա Ղազումյանը, Դիանա Սայանը, Շիրակ Գասպարյանը, Դիանա Յարալյանը և Իննա Մխիթարյանը: Այնուհետև տեղի ունեցավ բուռն քննարկում: **Համագործակցություն՝ Հայոց Պատմության և հասարակագիտության ամբիոն**
16.	Մասնակցություն	«ԵՊՀ լավագույն ուսանող» մրցանակաբաշխությանը	Մայիսի 17	ՈւԳԸ նախկին քարտուղար, «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Սյուզաննա Շահնազարյանը ճանաչվել ԵՊՀ լավագույն ուսանող: Այս անվանակարգի համար հավակնել են նաև ՈւԳԸ ևս 3 անդամներ՝ Ռոզա Մելքումյանը, Աստղիկ Ղազարյանը, Գերասիմ Ալավերդյանը:
17.	Ճանաչողա-կան այց	Թանգարանների միջազգային օրվա առթիվ	Մայիսի 18	ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ՈԻԳԸ և ՈԻԽ նախաձեռնությամբ իրականացվեց ճանաչողական այց Երևանի մի շարք թանգարաններ: Մասնաճյուղի բոլոր ֆակուլտետներից 24 ուսանողներ այցելեցին «Մայր Հայաստան» զինվորական թանգարան, Միջին Արևելքի արվեստի թանգարան, Արվեստի և գրականության թանգարան, Հայաստանի պատմության պետական թանգարան, Հայստանի ազգային պատկերասրահ: Ուսանողները ծանոթացան արվեստի տարբեր ճյուղերի հետաքրքիր ցուցանշումներին, մշտական և ժամանակավոր ցուցադրություններին՝ գործնականորեն ամրապնդելով իրենց տեսական գիտելիքները: **Համագործակցություն՝ ՈւԽ**

18.	Անհատական աշխատանք-ների նվիրաատվություն	Կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողների կողմից	Մայիսի 20	ՈՒԳԸ և ՈՒԽ նախաձեռնությամբ Կիրառական արվեստի ֆակուլտետի մի շարք ուսանողներ ստեղծել և նվիրաբերել են իրենց անհատական 16 աշխատանքները, որոնք այժմ զարդարում են ՈՒԳԸ և ՈՒԽ համատեղ աշխատասենյակը։ **Համագործակցություն՝ ՈՒԽ, Կիրառական արվեստի ֆակուլտետ**
19.	Առաջնություն	Շախմատի կանանց և աղջիկների առաջնություն	Մայիսի 23	Նախատեսվում է, որ կմասնակցեն 10 ուսանողուհիներ և դասախոսներ մասնաճյուղից։ Հաղթողը կպարգևատրվի գավաթով և պատվոգրով, իսկ 2-րդ ու 3-րդ տեղը զբաղեցրած մասնակիցները՝ պատվոգրերով։ Խաղը կվարի «ԻԿՄ» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող Արայիկ Շահնազարյանը։
20.	Առաջնություն	Շախմատի տղամարդկանց առաջնություն	Մայիսի 25	Նախատեսվում է, որ կմասնակցեն 13-15 ուսանողներ և դասախոսներ մասնաճյուղից։ Հաղթողը կպարգևատրվի գավաթով և պատվոգրով, իսկ 2-րդ ու 3-րդ տեղը զբաղեցրած մասնակիցները՝ պատվոգրերով։ Խաղը կվարի Հայաստանի շախմատի ֆեդերացիայի Իջևանի մասնաճյուղի մարզիչ Էմիլ Մատինյանը։ **Համակործակցություն՝ Հայաստանի շախմատի ֆեդերացիայի Իջևանի մասնաճյուղ**

Մասնաճյուղի ՈԻԳԸ նախագահ՝ Հ.Ղարագյոզյան

քարտուղար՝ Ա. Բաղիյան